**ՀՀ Սյունիքի մարզի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նախատեսվող գործունեության՝ «Նոր լցակույտային տնտեսությունների ձևավորում» հանրային լսման**

# Արձանագրություն

Ք. Քաջարան 26.09.2025թ.

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 15:00-ին, Քաջարանի մշակույթի պալատում (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 2), տեղի ունեցավ հանրային լսում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ «Նոր լցակույտային տնտեսության ձևավորում» նախատեսվող գործունեության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը (այսուհետ՝ նաև Հանրային լսում կամ լսում):

Հանրային լսման մասին ծանուցումը տեղադրվել է Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի պաշտոնական կայքերում (www.kajaran.am), փակցվել է համայնքի ղեկավարի նստավայրի և հանրային նշանակության շենքերի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակների վրա, ինչպես նաև հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի թիվ 143 (7371/5) թողարկման «Ծանուցումներ» բաժնում:

Լսմանը մասնակցել են «ԶՊՄԿ» ՓԲ Ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոնի», «Ակունք» ֆիրմայի, Քաջարանի համայնքապետարանի ներկայացուցիչները, «Սյունիք» հեռուստաընկերության աշխատակիցները և այլ քաղաքացիներ:

Հանրային լսումը վարում էր Քաջարան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Զոհրապ Առաքելյանը: Պարոն Առաքելյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հանրային լսումներ կազմակերպելու վերաբերյալ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, նոր լցակույտային տնտեսության ձևավորման նախագծի վերաբերյալ փաստաթղթերը:

**Խոսք (Զոհրապ Առաքելյան)**

Բարև Ձեզ հարգելի մասնակիցներ: Այսօր «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից, Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի արդյունահանման նախագծի փոփոխության՝ «Նոր լցակույտային տնտեսության ձևավորման» նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումն է: Այժմ խոսքը տանք Այային, հետո կշարունակենք:

**Խոսք (Այա Ղազարյան)**

Բարև Ձեզ: Ինչպես նշեց պարոն Առաքելյանը, այսօր մենք իրականացնում ենք օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության՝ լցակույտային տնտեսության բաժնի մասով, ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական փուլի երկրորդ հանրային լսումը: Այսօրվա հանրային լսման մասնակիցներն են՝ «Ակունք» ֆիրմայի տնօրեն Նիկողոսյան Հովհաննեսը, ով իրականացրել է ՇՄԱԳ հաշվետվության կազմումը և համապատասխան նախատեսվող

գործունեության գնահատման աշխատանքները, փորձաքննական կենտրոնի մասնագետ՝ Քրիստինե Հարությունյանը, պարոն Առաքելյանն արդեն ներկայացավ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն՝ Արմեն Ստեփանյանը, ես՝ Ասյա Ղազարյանս՝ կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ, Արման Վարդանյանը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական գծով տնօրեն և Սերգեյ Աբարահամյանը՝ հաշվետվությունների մասնագետ:

Այժմ արդեն խոսքը կփոխանցենք փորձաքննական կենտրոնին, քանի որ այսօրվա հանրային լսման պատասխանատու են հանդիսանում փորձաքննական կենտրոնը, համայնքը՝ նախաձեռնողի մասնակցությամբ: Փորձաքննական կենտրոնը նույնպես կներկայացնի փորձաքննության վերաբերյալ որոշակի մասեր:

**Խոսք (Քրիստինե Հարությունյան)**

Շնորհակալություն: Հարգելի ներկաներ, ողջունում եմ բոլորիդ: Ինչպես նշեցին գործընկերներս, այսօր տեղի է ունենում հանրային լսում՝ կապված Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի» փոփոխության, այն է՝ նոր լցակույտային տնտեսության ձևավորման հետ: Կարևոր եմ համարում նշել, որ փորձաքննությունն իրականացրել է ՊՈԱԿ-ի տնօրեն տիկին Հերիքնազ Մկրտչյանը և աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ այսօր նա չի կարողացել ներկա գտնվել այստեղ, հանրային լսմանը: Բայց, այնուամենայնիվ, հանրային երկրորդ լսումը կայանում է և ըստ ընթացակարգի կշարունակենք մեր աշխատանքները: Ես ներկայացնեմ փորձաքննական գործընթացի վերաբերյալ որոշակի տեղեկատվություն...

**Խոսք (Արման Վարդանյան)**

Ներողություն եմ խնդրում, մի փոքր շտկում անեմ. ոչ թե նոր լցակույտի ձևավորման մասին է խոսքը գնում, այլ գոյություն ունեցող լցակույտների նախագծի փոփոխության:

**Խոսք (Քրիստինե Հարությունյան)**

Ասացի՝ «Արդյունահանման նախագծի փոփոխություն»:

**Խոսք (Արման Վարդանյան)**

Լցակույտային տնտեսությունները գոյություն ունեն արդեն:

**Խոսք (Քրիստինե Հարությունյան)**

Գիտեմ, շնորհակալություն: Ուրեմն նշեմ, որ փորձաքննությունն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքով» սահմանված կարգով: Օրենքի պահանջով՝ փորձաքննության գործընթացում հաշվետվությունն ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին, պետական կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կարծիքներ ստանալու նպատակով: Նշված մարմիններից ստացվել են առաջարկություններ, դիտողություններ, կարծիքներ և հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման: Նշեմ նաև, որ լրամշակված հաշվետվության վերաբերյալ ևս ստացվել են կարծիքներ և, ես կուզեի առանձնահատուկ ուշադրություն դարձնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և անտառային քաղաքականության վարչության կողմից ներկայացված կարծիքներին, ըստ որի՝ այն տարածքներում, որտեղ նախատեսվում է

իրականացնել նախատեսվող գործունեությունը, առկա են պետական անտառային հողեր՝ մոտավորապես 23 հա, և անտառածածկ տարածքներ՝ 16 հա: Խոսքը վերաբերում է «Ձորատեղի» լցակույտի տարածքին: Ես շարունակեմ, հետո դրա վերաբերյալ պարզաբանումներ կլսենք: Փորձաքննական գործընթացի համար շատ կարևոր է հանրային լսումներ իրականացնելը, որպեսզի հնարավոր լինի իմանալ նաև շահագրգիռ անձանց՝ հանրության և ազդակիր համայնքի կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները: Այսօրվա հանդիպումը հենց այդ նպատակն է հետապնդում, որպեսզի մենք կարողանանք լսել բոլոր շահագրգիռ անձանց հարցերը, կարծիքներն ու առաջարկությունները և հնարավորության սահմաններում պատասխանել նաև հարցերին: Նշեմ, որ նախատեսվող գործունեությունը, ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի» հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ, քանի որ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ունի ավելի մեծ ազդեցություններ՝ համեմատած «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների հետ: Նշեմ նաև, որ եթե ունենաք առաջարկություններ և դիտողություններ, կարող եք դրանք ուղարկել նաև գրավոր՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի» պաշտոնական էլեկտրոնային փոստին: Փորձաքննության գործընթացի վերաբերյալ այսքանը: Նշեմ նաև, որ բնականաբար, նախատեսվող գործունեության ընթացքում լինելու են ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, որոնց վերաբերյալ ընկերությունը մշակել է «Բնապահպանական կառավարման պլան», որպեսզի այդ ազդեցությունները մեղմացնի, նվազագույնի հասցնի, ինչու չէ նաև բացառի, և մշակել է «Մշտադիտարկումների ծրագիր», որոնց վերաբերյալ, կարծում եմ, իրենք ավելի մանրամասն կներկայացնեն:

Փորձաքննության գործընթացի վերաբերյալ այսքանը: Վերջում կլսենք Ձեր հարցերը և կփորձենք պատասխանել Ձեր հարցերին: Շնորհակալություն:

**Խոսք (Այսա Ղազարյան)**

Շնորհակալություն: Ինչպես նշեցիք, այո՛, մենք ներկայացրել ենք «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխություն», որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է փորձաքննության, «Ա» կատեգորիայի և, հետևապես, անցնում է փորձաքննության ավելի բարդ փուլ: Մասնավորապես, գործունեությունը վերաբերում էր լցակույտային տնտեսությունների ընդլայնմանը, այսինքն՝ արդյունահանման նախագծի փոփոխությանն այդ մասով: Ստացել ենք հաշվետվության վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ, ինչպես նշվեց, տարբեր գերատեսչությունների կողմից, որոնց համապատասխանաբար պատասխանել են, այսպես ասած՝ դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել և ներկայացվել է փորձաքննական կենտրոն: Ինչ վերաբերում է Ձեր նկատառմանը, որը վերաբերում էր հողերին, մենք «ներկայացում» ունենք, որտեղ մեր հողային ռեսուրսները ներկայացված են, հետևապես, ամենավերջում կանդրադառնանք այդ հարցին:

Հիմա կխնդրեմ մեր գործընկերներին ներկայացնել նախատեսվող գործունեությունը շատ հակիրճ, որպեսզի վերհիշենք, թե ինչ ենք ներկայացրել փորձաքննության, և արդեն կանդրադառնանք մնացած գնահատման աշխատանքներին:

**Խոսք (Արման Վարդանյան)**

Բարև Ձեզ: Նախ հիշեցնեմ նախապատմությունը, նպատակը՝ ինչի համար են ներկայացվել այս փոփոխությունները լցակույտային տնտեսության մասով:

Երբ 2016 թվականին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը դիմել էր նախագծի փոփոխության, այդ ժամանակ նախագիծն անցել էր փորձաքննություն և փորձաքննական եզրակացությունում պահանջ կար, որպեսզի մինչև 2026 թվականը պոչամբարի և լցակույտերի մասով ներկայացնել նոր նախագիծ, քանի որ այդ ժամանակ ներկայացված նախագծով և՛ պոչամբարում, և՛ լցակույտում բավարար քանակի ծավալ չկար, որպեսզի կոմբինատն աշխատեր մինչև լիցենզիայով նախատեսված ժամկետի ավարտը՝ 2041 թվականը: Այդ պատճառով մենք մշակել և ներկայացրել ենք առանձին նախագծեր և՛ պոչամբարի մասով, և՛ լցակույտերի մասով, ինչն այսօր ներկայացնում ենք: Ակտիվ լցակույտերից այս պահին գործում են «Սպիտակ ջուր 1», «Սպիտակ ջուր 2» լցակույտերը և «Զորատեղ» լցակույտը: «Սպիտակ ջուր» լցակույտերի մասով հիմնական փոփոխությունը, որ ներկայացրել ենք, վերաբերում է լցակույտի արտաքին ձևին, արտաքին դիզայնին: Եթե նախկինում մոտեցնող ճանապարհները բոլորն անցնում էին լանջով, այս պարագայում մենք որոշել ենք ճանապարհները կառուցել հենց լցակույտի վրա, ինչը թույլ կտա նվազեցնել հողերի դեգրադացիան, ավելի քիչ հողեր կենթարկվեն ազդեցության: Իսկ «Զորատեղ» լցակույտը, որը մեր հիմնական ամենամեծ լցակույտն է, այնտեղ կա նաև ընդլայնում: Ինչու՞ այդ ընդլայնումը նախկինում չէր կատարվել, որովհետև լցակույտի ստորին հատվածում գոյություն ուներ, ձևավորվել էր մի մեծ հանքաստիճան, որը խնդրահարույց էր կայունության առումով, և պետք էր այդ հանքաստիճանը բաժանել մի քանի մասի, որպեսզի հնարավոր լիներ լցակույտը մեծացնել: Այդ աշխատանքների լուծումները տրված են նախագծով և, եթե ընդհանուր ծավալներով ասենք, «Սպիտակ ջուր 1» և «Սպիտակ ջուր 2» լցակույտերի ընդհանուր ծավալը նախկին նախագծով 28,4մլն մ³ էր, իսկ այս նախագծով՝ 35,4 մլն մ³: Այսինքն, աճը՝ ընդլայնումը ծավալի մասով կազմում է ընդամենը 7մլն, իսկ «Զորատեղ» լցակույտի մասով նախկին ծավալը՝ 2016 թվականին ներկայացված ծավալը մոտավորապես 73մլն մ³ էր, այժմ ծավալը լինելու է մոտավորապես 138մլն մ³, աճը կազմում է 65 մլն մ³:

Այստեղ ներկայացված է գլխավոր հատակագիծը, երկու լցակույտերը միասին: Ներկայացված է վերջնական տեսքը, ինչը որ լինելու է արդեն 2041 թվականին, բաց հանքի նախատեսվող շահագործման ավարտին:

Սա նույն պատկերն է (հաջորդ սահիկում), վերջնական տեսքն է արդեն արբանյակային նկարի վրա, որպեսզի հասկանալի լինի, թե ինչ տեսք ունի, որ հողերի վրա են կառուցվելու և ընդլայնվելու լցակույտերը:

Այստեղ (հաջորդ սահիկում) համեմատություն ենք ներկայացնում նախկին նախագծի և ներկայիս առաջարկվող նախագծի միջև: Ինչպես տեսնում եք, ձախ մասում ներկայացված է նախկին նախագիծը, իսկ աջ մասում աննշան փոփոխություններ են կատարված հիմնականում ճանապարհների մասով և քանի որ երկու լցակույտերը միանում են իրար այստեղ, մենք այսուհետ նախագծով «Սպիտակ ջուր 1», «Սպիտակ ջուր 2» լցակույտերը անվանում ենք միասնական «Սպիտակ ջուր» լցակույտ անվամբ: Լցակույտի բարձրությունը նախկին նախագծի համեմատ չի փոխվել, միայն անկյուններն են մեղմացվել և մի փոքր, թեթևակի ծավալն է մեծացել: Վերը աղյուսակում ներկայացրել ենք պարամետրերը և կատարել ենք նաև լցակույտերի կայունության գնահատում: Կայունության գնահատումը կատարվել է՝ ինչպես ստատիկ պայմաններում, այնպես էլ  սեյսմիկ ազդեցությունը հաշվի

առնելով: Երկու դեպքերում էլ նախագիծը կազմվել է այնպես, և դա արդեն կայունության գնահատումը ցույց է տվել, որպեսզի կայունության գործակիցը գերազանցի սահմանված նորմատիվը, ինչի գործակիցը ստատիկ պայմաններում 1 է, իսկ սեյսմիկ ազդեցության պայմաններում 1.3: Այս երկու պայմանները բավարարված են:

«Ձորատեղ» լցակույտի մասով այստեղ ներկայացված են փոփոխություններ: Եթե նայեք, այստեղ նույնպես, ձախ մասում նախկին նախագիծն էր: Եթե տեսնեք, վերևի հատվածում դեռ ոչ մի բան չէր կատարվում, ձեռք չէր տրվում, քանի որ այնտեղ կար ռիսկ կայունության առումով, որն ուսումնասիրվել է, և լուծումներ են տրվել: Եվ արդեն աջ հատվածում ներկայացված է նոր նախագիծը, որով այդ խնդրահարույց հատվածը բաժանվել է 4 աստիճանի, ինչն ապահովելու է կայունությունը:

Նախագծով նախատեսվում են նաև ջրահեռացման միջոցառումներ. նախ լցակույտի բերմաների վրա կառուցվելու է ջրահեռացման համակարգ, որպեսզի տեղումների արդյունքում առաջացած ջրերը դուրս հանվեն լցակույտի մակերևույթից, ինչպես նաև լցակույտի եզրային հատվածում կառուցվելու է երկու ջրանցք, մեկը՝ ժամանակավոր, իսկ մյուսը՝ մշտական, որով ձնհալի, մակերևութային ջրերի և այլ տեղումների ջրերը, որոնք հավաքվելու են լցակույտից վերև գտնվող լանջերին, չմտնեն լցակույտից ներս և դուրս հանվեն լցակույտի տարածքից, որպեսզի ապահովվի անվտանգ շահագործումը և կայունության բարձր աստիճանը: Այստեղ նույնպես կատարել ենք կայունության գնահատում (հաջորդ սահիկում)՝ նույն չափանիշներով, և՛ սեյսմիկ, և՛ ստատիկ պայմաններում: Հաշվարկները ցույց են տալիս, որ այստեղ նույնպես լցակույտը կայուն է և բավարարում է նորմատիվային պահանջները: Այսքանը տեխնիկական մասով:

**Խոսք (Ասյա Ղազարյան)**

Շատ բարի, շնորհակալություն: Ինչ վերաբերում է արդեն ազդեցությանը և նախատեսվող գործունեության հեռավորությանը բնակելի շենքերից և ենթակառուցվածքներից, այստեղ ներկայացված են՝ կարող եք տեսնել, առնվազն 1կմ-ից ավել հեռավորության վրա են գտնվելու այն հատվածից, որտեղ իրականացվելու են աշխատանքներ: Ամենաշատ հեռավորությունը մեզ մոտ արդեն կազմում է մոտ 2300 մ: Այնուհետև, ինչ վերաբերում է հողային ռեսուրսներին, որոնք նշվեցին փորձագիտական կենտրոնի կողմից՝ այստեղ նշված է այն ընդլայնվող մակերեսը, որը մեզ անհրաժեշտ է, հողային ռեսուրսների մասով ձեռք բերել, որպեսզի կարողանանք ընդլայնումն ապահովել: Ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 78 հա, որը ներառում է ոչ միայն լցակույտերը, այլ նաև նշված ենթակառուցվածքները, այսինքն՝ մակերևութային ջրերի որսման վաքաշար, սպասարկման ճանապարհներ, որտեղից մոտավորապես 35 հեկտարը՝ ներառյալ ենթակառուցվածքները, կազմում են անտառային կատեգորիայի հողեր: Եվ այո՛, «Անտառային կոմիտեի» կողմից ներկայացվել է նկատառում, որ անտառային հողերը խախտելու պարագայում անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով իրականացնել անտառվերականգնման աշխատանքներ: Եվ ընկերությունը պարտավորություն է վերցրել, և նաև հաշվետվության մեջ է դա ներառված, որ ցանկացած խախտվող մեկ հեկտարի համար, օրենքով սահմանված կարգով մենք իրականացնենք անտառվերականգնում, որն իրենից ենթադրում է առնվազն երկու անգամ նշված մակերեսի վերականգնում: Նշեմ նաև, որ նախկին պարտավորություններից մենք արդեն իրականացրել ենք 18 հա անտառվերականգնման աշխատանքներ, իսկ հետագայում ունենք նաև մի շարք պլանավորված կանաչապատման և անտառապատման աշխատանքներ: Այսքանը, թերևս: Այնուհետև, պարոն Նիկողոսյան, կխնդրեմ շատ հակիրճ ներկայացնեք, թե նախատեսվող գործունեությունն ինչ ազդեցություն ունի:

**Խոսք (Հովհաննես Նիկողոսյան)**

Ուրեմն, ազդեցությունն առաջին հերթին մթնոլորտային օդի վրա է լինելու: Միջանցքի շինարարության և պարզարանի շինարարության համար աշխատելու են մեկ հերթափոխով: Արտանետումներն ըստ ՍԹԿ-ի կազմում են 0.013-ից մինչև 0.01, այսինքն նորմայի սահմաններում են: Ջրցանում է նախատեսված, որը կնվազեցնի փոշու արտանետումը: Բացի գազերի արտանետումներից, ծծմբային անհիդրիդ, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, որոնք նվազագույն են՝ 0.08, ածխածնի օքսիդը և ազոտի օքսիդը՝ 0.01, ծծմբային օքսիդը՝ 0.0010-ի մինուս 4 աստիճան: Ինչ վերաբերում է հիմնական ջրանցքին, որի կառուցումը տևելու է 5 տարի, հաշվելով հետլիցքը, գրունտի հանումը, հարթեցումը և այլ ծախսերը՝ մենք... ուրեմն, փոշին կլինի 0.022 ՍԹԿ, ծծմբային անհիդրիդը՝ 0.04, ածխածնի օքսիդը՝ 0.012, ազոտի օքսիդը՝ 0.01: Մյուս ազդեցությունը, որը կարող է լինել շինարարության ժամանակ աղմուկի ազդեցությունն է: Մենք հաշվարկել ենք, որ միաժամանակ կաշխատի բուլդոզեր, 300 մետրի վրա դրա աղմուկի մակարդակը դառնում է 45, այսինքն՝ նորմայի սահմաններում է, իսկ մոտակա բնակելի շենքերում՝ 3.6 դեցիբալ: Ի՞նչ ասեմ...

**Խոսք (Ասյա Ղազարյան)**

Շնորհակալություն, պարոն Նիկողոսյան:

**Խոսք (Հովհաննես Նիկողոսյան)**

Շահագործման ժամանակ է՞լ ասեմ:

**Խոսք (Ասյա Ղազարյան)**

Ինձ թվում է հիմնական պարամետրերը դուք արդեն ներկայացրեցիք: Ես ուղղակի լրացուցիչ նկատառում կանեմ: Կխնդրեմ վերջին սահիկը ներկայացնեք: Ուզում եմ անպայման շեշտել, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն ունի հագեցած մոնիթորինգի համակարգ, որն անընդհատ բարելավվում է: Այստեղ զուտ ներկայացված է թե մի կետում մեր արտանետումները ինչպես ենք մոնիթորինգ անում: Եվ կառավարման համակարգով միանշանակ նշված են հնարավոր ազդեցությունների, ինչպես նշեցիք, մեղմացման և կանխարգելման միջոցառումները, որոնք անպայման նախագծի շրջանակներում մենք կպահպանենք: Այսքանը, թերևս նախատեսվող գործունեության վերաբերյալ: Ինչպես նշվեց արդեն ներկայացուցիչների կողմից, օրենքով սահմանված կարգով՝ ծանուցման հրապարակման օրվանից հետո 25 աշխատանքային օրվա ընթացքում կարող եք ներկայացնել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները՝ ինչպես գրավոր, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով, թե' ՇՄՆ փորձագիտական կենտրոնին, թե' ծանուցման մեջ նշված էլեկտրոնային հասցեներով, այսինքն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ և Քաջարանի համայնքապետարան: Նշենք նաև, որ մենք արդեն մտնում ենք փորձաքննության ավարտական փուլ, որից հետո արդեն պարզ կլինի, արդյոք նախատեսվող գործունեությունը ստանում է դրական, թե բացասական եզրակացություն: Այսքանը: Որևէ խոսք ունե՞ք, խնդրեմ, համեցե՛ք:

**Խոսք (Քրիստինե Հարությունյան)**

Ես կուզեի նշվեր նաև ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունների և նախատեսվող միջոցառումների վերաբերյալ:

**Խոսք (Հովհաննես Նիկողոսյան)**

Ջրային ռեսուրսների վրա ազդելու են տեղումները, որոնք հավաքվելու են և տեղափոխվելու են պարզարան: Պարզարանում կատարվելու է նստեցում, կախված նյութերը նստելու են, իսկ ջուրը պարզելուց հետո արտահոսելու է մոտակա ձորակը: Այսինքն ջրերի խնդիր մենք չունենք: Իսկ ինչ վերաբերում է շինարարության ժամանակ խմելու ջուրը լինելու է շշալցված ջուր, իսկ ոռոգման և ջրցանի համար օգտագործվելու է ջրցան մեքենա:

Խոսք (Քրիստինե Հարությունյան)

Շնորհակալություն: Վերջում ես կուզենայի ասել, որ փորձաքննության գործընթացը դեռևս շարունակվում է և դրա արդյունքները նաև կախված են այսօրվա արդյունքներից և ձեր առաջարկություններից ու դիտողություններից: Եթե ձեր առաջարկություններն ու դիտողությունները լինեն հիմնավոր, անպայման հաշվի են առնվելու փորձաքննական եզրակացությունը կազմելիս: Շնորհակալություն:

Խոսք (Այսա Ղազարյան)

Շնորհակալություն: Այսքանը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Եթե հարցեր կան, խնդրեմ, համեցե՛ք: Շատ բարի, շնորհակալություն, այսքանով եզրափակենք:

***Ստորագրություններ՝***

***Հանրային քննարկման պատասխանատուներ՝***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ

Հերիքնազ Մկրտչյան

***Ձեռնարկող՝***

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»

ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ՝

Արթուր Նիկողոսյան

***Հանրային քննարկման վարող՝***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ՝

Քրիստինե Հարությունյան